Հավելված 5
ՀՀ կրթության և գիտության նախարարի
2016 թվականի դեկտեմբերի 5-ի թ. 1249-Ա/2 հրամանի

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

2016-2017 **ուստարվա ՀՀ դպրոցականների** <<**Ինֆորմատիկա**>> **առարկայի**

օլիմպիադայի կազմակերպման և անցկացման

1. Սույն Ընթացակարգով կարգավորվում են 2016-2017. ուսումնական տարվա Հայաստանի Հանրապետության դպրոցականների <<Ինֆորմատիկա>> առարկայի օլիմպիադայի /այսուհետ՝ Օլիմպիադա/ կազմակերպման և անցկացման հետ կապված հարաբերությունները:
2. Սույն Ընթացակարգով սահմանված Հավելվածների ձևանմուշները, առաջադրանքները, պատասխանները, արդյունքները և Օլիմպադայի վերաբերյալ այլ տեղեկությունները տեղադրվում են www.olymp.am և lib.armedu.am կայքերում:
3. Օլիմպիադան կազմակերպվում է երեք փուլով՝ առաջին /դպրոցական/, երկրորդ /մարզային/ և երրորդ /հանրապետական/:
4. Օլիմպիադան անցկացվում է **հանրակարթական դպրոցում սովորող և C, C++ կամ Pascal ծրագրավորման լեզուներից որևէ մեկին տիրապետող աշակերտների համար՝** մեկ տարբերակով:
5. Ցածր դասարանում սովորողը կարող է մասնակցել օլիմպիադային:
6. Օլիմպիադայի երեք փուլերի տարբերակները՝ ըստ խմբերի, կազմում է հանրապետական առարկայական հանձնաժողովը:
7. Օլիմպիադայի առաջին փուլն անցկացվում է դպրոցում:
8. Օլիմպիադան կազմակերպելու համար դպրոցի տնօրենի հրամանով ստեղծվում է հանձնաժողով, որի կազմում չեն կարող ընդգրկվել ինֆորմատիկա առարկայի մասնագետներ:
9. Առաջին փուլին կարող է մասնակցել 4-րդ կետում նշված ծրագրավորման լեզուներից որևէ մեկին տիրապետող ցանկացած աշակերտ՝ այդ մասին տեղեկացնելով դպրոցի տնօրինությանը:
10. Դպրոցի տնօրինությունը մինչև 2016 թ. դեկտեմբերի 15-ը ներառյալ հայտագրված աշակերտների վերջնական ցուցակը՝ ըստ Հավելված 1-ի, ներկայացնում է մարզպետարան /քաղաքապետարան/:
11. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը /Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչությունը/ մինչև 2016թ. դեկտեմբերի 24-ը ներառյալ մասնակիցների ցուցակները ըստ Հավելված 2-ի ներկայացնում է հանրապետական կազմկոմիտեին՝ info@olymp.am հասցեով:
12. Հանրապետական կազմկոմիտեն հաստատում է առաջին փուլի մասնակիցների ցուցակը, որը տեղադրվում է www.olymp.am և lib.armedu.am կայքերում:

13. Օլիմպիադայի առաջին փուլն անցկացվում է 2017 թ. փետրվարի 14-ին ժամը 12:30-ին՝ առցանց /օնլայն/ եղանակով: Օլիմպիադայի անցկացման գործընթացին և ստուգման համակարգին ծանոթանալու նպատակով փետրվարի 13-ին, ժամը 14:00-ին կանցկացվի փորձնական, ուսուցողական փուլ:
14. Օլիմպիադայի առաջին փուլի արդյունքները չեն բողոքարկվում:
15. Օլիմպիադայի երկրորդ փուլն անցկացվում է մարզպետարանների /Երևանի քաղաքապետարանի/ կողմից սահմանված վայրում:
16. Երկրորդ փուլին մասնակցում են առաջին փուլում լավագույն արդյունքներ ցուցաբերած աշակերտները՝ հանրապետական կազմկոմիտեի որոշման համաձայն:
17. Օլիմպիադայի երկրորդ փուլն անցկացվում է 2017թ. փետրվարի 28-ին ժամը 10:00-ին՝ առցանց /օնլայն/ եղանակով:
18. Երկրորդ փուլի հաղթողները պարգևատրվում են մարզպետարանների /Երևանում քաղաքապետարանի/ դիպլոմներով և գովասանագրերով:
19. Օլիմպիադայի երրորդ փուլն անցկացվում է 2017 թ. ապրիլի 8-ին և 9-ին սկիզբը՝ ժամը 10:00- ին՝ ՀՀ ԿԳ նախարարության կողմից սահմանված վայրում:
20. Երրորդ փուլին մասնակցում են երկրորդ փուլում լավագույն արդյունքներ ցուցաբերած մասնակիցները՝ համաձայն հանրապետական կազմկոմիտեի որոշման:
21. ՀՀ ԿԳ նախարարության կողմից երրորդ փուլի մասնակիցներին տրվում են օլիմպիադայի մասնակցության հավաստագրեր:
22. Երրորդ փուլի հաղթողները պարգևատրվում են ՀՀ ԿԳ նախարարության դիպլոմներով:
23. Օլիմպիադայի երրորդ փուլի դիպլոմակիրները համարվում են ինֆորմատիկայի միջազգային օլիմպիադայի ՀՀ թիմի հավակնորդներ: